ինչ խոր ընկած հարթության կեդրոնում տեսնում ենք մի խաչ, ուղղահայաց, թևերը համեմատաբար ավելի յերկար, և ծայրերը յերկճղի։ Թևերի հանդիպման կեդրոնում յեղած քարը, ինչպես և ուղղահայաց թևի յերկու քարերը շրջանակված են ավելի մանր մարգարիտներով։ Կեդրոնի շուրջը՝ թևերի հանդիպման տեղում՝ նկատվում է նուրբ, բոլորակ լուսապսակ։



Խոտակերաց Ս. Նշանի պահարանը բացված դռնակներով. **Պատկեր 84.**

Խաչի վոսկեզոծ դաշտը ծածկված է արմավենիկի և հնգատերևի գեղեցիկ զարդերով, ցողունների վրա կանթեր և ոլակներ կազմած, մի յերևույթ, վոր հատուկ է և մանրանկարչական զարդարանքներին, քանդակագործության և ընդհանրացած է մեր և հարևան ազգերի արվեստների մեջ։ Վրաց Տբետի ավետարանի կազմը միքանի մոտիվներով բոլորովին նման է մեր պահարանի զարդերին և ԺԲ. դարու գործ է, հրատարակված Տակայշվիլու ձեռքով*։ Նույն բնույթն ունին նաև մեր պահարանի կողերի զարդերը (պատկ. 85 և 86), աջ և ձախ կողմից արմավենիկներ՝ ԺԳ. դարում հայ և մուսուլմանական արվեստների մեջ ընդհանրացած ձևերով, իսկ վերին կողինը հնգատերևներ, վորոնց ցողուններից բոլորաձև շրջանակներ են կազմված նրանց համար։ Այս զարդերը գծական են և վոչ բարձրացած մակերևույթով, ինչպես մարդկային պատկերներն են։

Խաչի տակ, բեկված կամարներով մի առանձին տեսարան են կազմում իրար հանդեպ զույգ յեղնիկները. նրանց մեջը մի թուփ, ճյուղերը տարածված այս և այն կողմը. յեղնիկները հետ են դարձրել գլուխները և տերև են ուտում (մանրամասնությունը պատկ. 87)։ Յեղնիկն ու յեղջերուն քրիստոնեական արվեստի մեջ ընդհանրապես, ինչպես և հայոց, շատ հաճախ գործադրված են խորհրդավոր նշանակությամբ, համեմատ ԽԱ. 1 Սաղմոսի։ Բայց կան նրանց պեսպիսություններ ևս. հայ քանդակագործության մեջ ամենահին որինակն ունինք պատմական Բասաղի (Բաշ-Ապարան) բազիլիկայի արևմտյան դրան ճակատին յերկու յեղջերուներ կանգնած են խաչի հորիզոնական թևերի ուղղությամբ իրար հանդեպ և դունչները մեկնել են դեպի խաղողի վորթի տերևները։ Բասաղի բազիլիկան մեր ճարտարապետության ամենահին մնացորդներից մեկն է, վոչ ուշ քան Ե—Զ. դարը։ Ժ. դարում շինված Աղթամարի Ս. Խաչի քանդակների շարքում վորթերի և վողկույզների մեջ ուրիշ կենդանիների հետ յերևում է նստած յեղջերուն յուր ձագի հետ։ Բայց այդ մոտիվը հատուկ չէ միայն քրիստոնեական արվեստին, այլ և արևելյան աշխարհիկ արվեստին, վորից որինակներ ունինք վոսկերչական և ապիկված արվեստների մեջ*։ Սմիրնովի Արևելյան արծաթի ժողովածուի անոթներից մեկը բոլորակների մեջ բուսական զարդերի հետ ունի և թռչուններ կամ յեղնիկներ. վերջինները նստած կամ



Պահարանի կողազարդերը. **Պատկեր 85. 86.**

Նստած յեղնիկներ. **Պատկեր 87.**

* Матеріалы по археологіи Кавказа. выпуск XII. Подъ редакціей Графини Уваровой. Москва, 1909. յեր. 151—162։

* Восточное Серебро. CIV 229.